ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 383 Ա                                        ք.Արտաշատ

„21„ դեկտեմբեր 2023թ.

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 1765-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արտաշատ համայնքի ղեկավարի 22 դեկտեմբերի 2023թ. թիվ Ե-5493 և 25 դեկտեմբերի 2023թ. թիվ Ե-5512 գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմին հատկացված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 2400.0/երկու միլիոն չորս հարյուր /հազար դրամ միանվագ օգնություն Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրման համար:

2.Վճարումը կատարել Արտաշատի համայնքի կողմից նշանակված նյութական պատասխանատու Խորեն Խաչատուրի Ուստյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով 5-օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս.ԹԵՎՈՆՅԱՆ